ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ, ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,09'' հունվար 2024 թվական

Արենիի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանի և «Թինկ Թանկ Արմենիա» վերլուծական կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ տեքստում կհիշատակվի որպես «ԹԹԱ»), որի անունից հանդես է գալիս կազմակերպության նախագահ Մարտիրոսյան Հակոբ Օնիկի,

Հաշվի առնելով, «ԹԹԱ» հավանական ֆինանսական նվիրաբերությամբ մասնակցությունը Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում իրականացվող սուբվենցիոն ծրագրում ներառված, ոռոգման ներքին ցանցի ամբողջական կառուցման և խմելու ջրի ցանցի վերականգնման աշխատանքներին՝ այն է նախատեսվող գումարների համայնքային մասնակցության չափ որոշակի նվիրաբերություն, ինչը՝ համաձայն կարգավորիչ նորմատիվ իրավական ակտերի, եթե այն իրականացվում է «բարեգործների և այլ նմանատիպ նախաձեռնությունների» մասնակցությամբ, ապա համայնքային մասնակցության չափաբաժինը դրա հաշվառմամբ կկազմի հաստատված ընդհանուր գումարի 20%-ը, ինչի արդյունքներից ելնելով դրանց արդյունավետ շահագործումից է մեծապես կախված նշված բնակավայրում «ԹԹԱ» ծրագրերի շարունակականության ապահովվումը

ԿՈՂՄԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կզարգացնեն և կծավալեն համագործակցությունը ուղղված Խաչիկ բնակավայրում հաստատված՝ այդ թվում, վերոնշյալ սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը.

ՀՈԴՎԱԾ 2

2.1. Կողմերը նախորոք միմյանց կուղարկեն վերոնշյալ աշխատանքների համար՝ ըստ բնակավայրի՝

- աշխատանքների իրականացման վայրի, դրանց հաջորդականության, սկզբի և ավարտի,

- նախատեսվող աշխատանքների ծավալների՝ ըստ այդմ, արված գնային առաջարկությունների,
- կատարված աշխատանքների ծավալների և որակի,

2.2. Կողմերը կնպաստեն իրենց միջև համագործակցության զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 3

3.1. «ԹԹԱ»-ի կողմից ստորագրված ծրագրերին մասնակցության համաձայնագիրը արդյունավետ կդառնա այդ մասին մյուս կողմի՝ պատշաճ ցանուցվելուց և հավանությունից հետո:

3.2. Կողմերը կօժանդակեն հաստատված ծրագրերի մասով՝ շահագրգիռ անձանց միջև ուղղակի համագործակցությանը՝ հիմնված անմիջական փոխըմբռնման վրա:

ՀՈԴՎԱԾ 4

4.1. Կողմերը կստեղծեն համակարգող խումբ, որը պատասխանատու է համագործակցությունը իրականացնելու համար և պարբերաբար՝ աշխատանքների ժամանակահատվածում, (ժամկետները կորոշեն կողմերը) կտեղեկացնի սույն Հուշագրի շրջանակներում աշխատանքների ընթացքի և զարգացման մասին:

4.2. Խումբն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սույն Հուշագրի իրագործմանը նպաստելու ուղղությամբ:

4.3 «ԹԹԱ»-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ , իր հայեցողությամբ, այցելել և ստուգել կատարվող աշխատանքների ընթացքը:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Հուշագիրն ուժի մեջ կմնա մինչև աշխատանքների վերջնական ավարտը, ինչը կամրագրվի դրանց ընդունման և անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմամբ, եթե Կողմերից որևէ մեկը, գրավոր կերպով չեղյալ չհայտարարի այն: Այդ պարագայում չեղյալ հայտարարելը ուժի մեջ կմտնի տեղեկացման օրվանից 15 /տասնհինգ/ օր անց: Այս հոդվածին համապատասխան սույն Հուշագիրը չեղյալ հայտարարելու դեպքում նրա սահմաններում իրականացվող անավարտ մնացած ցանկացած ծրագիր կմնա ուժի մեջ մինչև դրա ավարտը:

Ի հաստատումն վերոշարադրյալի՝ երկու կողմից պատշաճ կերպով լիազորված ներքոհիշյալ ներկայացուցիչները ստորագրեցին սույն Հուշագիրը:

ՀՈԴՎԱԾ 6

6.1. Կողմերն ընդգծում են անմիջական կոնտակտների և, ըստ անհրաժեշտության, երկու Կողմերի նախաձեռնություններում բարդությունների առաջացման դեպքում՝ երկուստեք

ընդունելի որոշումների կայացման նպատակով երկկողմ պարբերական հանդիպումների անցկացման կարևորությունը:

6.2. Սույն Հուշագիրը պայմանագիր չէ և չի առաջացնում օրենքով կարգավորվող իրավունքներ և պարտականություններ:

6.3. Սույն Հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից սկսած:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արենիի համայնքապետարան ՀՀ Վայոց ձորի մարզ գ. Արենի Հ/Հ 900355115180 ՀՎՀՀ 08914384 Համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյան _____ ստորագրություն Կ.Տ.	«Թինկ Թանկ Արմենիա» վերլուծական կենտրոն ՀԿ Հասցե՝ Հայաստան, 0009, Երևան, Անտառային 120/14, 1 Նախագահ՝ Հակոբ Մարտիրոսյան _____ ստորագրություն Կ.Տ